ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի N56-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՄԲ ՍՏԵՂԾՎԱԾ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐԸ ՔՆՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ք. Վարդենիս 04/12/2023թ.

Հանձնաձողովի նիստին ներկա են՝ հանձնաժողովի նախագահ՝ Ահարոն Խաչատրյան, արձանագրող՝ Աբգար Աբգարյան, անդամներ՝ Կարեն Մկրտչյան, Կամո Զարոյան, Պավլիկ Պողոսյան, Հրանտ Զարոյան:

Օրակարգ՝ <<ԿՎԱՐՑ ՀՈԼԴԻՆԳ>> ՍՊԸ-ի տնօրեն Գուրգեն Կազմիկի Հակոբյանի նկատմամբ վարչական վարույթ իրականացնելու մասին:

Հանձնաժողովի նախագահը տեղեկացրեց, որ ՀՀ Գեղարքունիքի մարզային դատախազությունը 31124723 քրեական վարույթի շրջանակներումպարզել է, որ Ներքին Շորժա և Ակունք բնակավայրերի վարչական սահմաններում ընգրկված պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում Գուրգեն Կազմիկի Հակոբյանի կողմից առանց համապատասխան թույլտվության կատարվել են ինքնակամ շինարարական աշխատանքներ, որի համար ՀՀ Գեղարքունիքի մարզային դատախազությունը դիմել է համայնքապետարան վարչական վարույթ իրականացնելու համար: 2023 թվականի նոյեմբերի 28-ի N 2684 գրությամբ՝ <<ԿՎԱՐՑ ՀՈԼԴԻՆԳ>> ՍՊԸ-ի տնօրեն Գուրգեն Կազմիկի Հակոբյանը ծանոցվել է վարչական վարույթի նիստի անցկացման տեղի, օրվա և ժամի վերաբերյալ, սակայն Գուրգեն Կազմիկի Հակոբյանը չի ներկայացել:

Հաշվի առնելով վերոգրյալը հանձնաժողովը որոշեց վարչական պատասխանատվության ենթարկել Գուրգեն Կազմիկի Հակոբյանին՝ <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի պահանջներով:

հանձնաժողովի նախագահ՝ _____ Ահարոն Խաչատրյան

անդամներ՝ _____ Կարեն Մկրտչյան

_____ Կամո Զարոյան

_____ Պավլիկ Պողոսյան

_____ Հրանտ Զարոյան

արձանագրող՝ _____ Աբգար Աբգարյան